լով Թիֆլիզու Հայք առած մի ունին հին ու պա-
պենական խօսքերէն մնացած՝ որ կասեն. Թ-ր-ք-ը
Թ-ր-ք-ին հաւոդ ա, Հայը Հայուն խաւոդ ա։
Հրատարակողը սուտ չէ հանած այս առածի իմաստը, որովհետև կաշխատի իրեն Հոգևորականաց հարց և եղբարցը համար խաւոդութիւնը ձեռք առնել՝ չամաչելով 'ի մարդկանէ՝ և չերկնչելով յԱստուծոյ. այդպիսի սուտ ու մուտ խօսքերով կՁանայ այդպանել իրեն եկեղեցին և անոր պաշտօնեաները. մեծ հեռաւորութիւն կայ երկուց Ցէբութեանց մէջ, Ռուսիոյ և Օսմանեան, ինչ զարմանք բան է որ Ռուսաստանի մէջի չեղուած լուրը Պոլիս եղածի պէս կ'հրատարակվի. այդ ոչ այլ ինչ է. եթէ ոչ անզգամութիւն։ Իմաստնոյն Սողոմոնի խրատին նայելով՝ որ կասէ, "Մի՛ տար անզգամին պատասխանի ըստ նորա անզգամութեան . . . այլ տուր պատասխանի, զի մի՛ երևեսցի իմաստնագոյն յանձն իւր". թէպէտ և չէր արժան մեզ այս պատասխանին գրել, բայց անոր համար գրեցինք համառօտապէս ալ ըլլայ նէ՝ որ մեր սիրելի ընթերցողները հաւատ չի ընծայեն այդպիսի ստութեանը, և գուցէ նոյն իսկ լրագիր հրատարակողը թէ նոյն օրագրաց մէջ և թէ այլ լրագրաց գուցէ այլ ևս այդպիսի հայհոյութիւններ գրած ունենայ, անոնց ևս չ'հաւատան. այսչափ մեզ պարտք էր գրել ու յայտնել. յայտնի է որ ճշմարիտ ու լաւ մարդը ճշմարիտ ու ուղիղ բաներու ետևէ կը հետևի և ոչ հայհոյութեան. այլ այսպիսի բաներ գրել բարի մարդոյ գործ չէ. զի սուրբ Աւետարանն կասէ. "Մարդ բարի 'ի բարի գանձուց սրտի բղխէ զբարի. և մարդ չար՝ բղխէ զչար"։

Վերջապէս խոնարհարար կխնդրեմ . . . . Խմբագրողէդ այս համառօտ նամակս նոյնութեամբ և իսկութեամբ տպագրել ու հրատարակել Արարատի միջոցաւ. և ցաւելով կ'հրաւիրեմ պատուական յօրինողին և կխնդրեմ նոյնպէս՝ եթէ արդարև ունի նա ստացած Ռուսաստանէն որպիսի և իցէ նամակ այս բանի վրայով թէ հոգևորականներէն և թէ աշխարհականներէն մեր քաղաքի եկեղեցեաց վերաբերեալ, թող բարեհաճի առաջարկել 'ի Հոգևոր Առեան Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի 'ի տնօրէնութիւն. ուր տեղ կըլլայ արդար դատաստանը այդպիսի գործոց։ Իսկ եթէ չունի ձեռքին փաստ մի, ապա թող առաջի Աստուծոյ և առաջի մարդկան պատասխանատու ըլլայ իւր ստութեանցը՝ որ արգելուած է Աստուծոյ տասն պատուիրանաց մէջ 8ՐԴ· յօդուածովը։

Եղիա Ա-ապ Վրահանայ Շ-ԱԲՇԻԷԵԱՆՑ։
է 25· ԵԳՈՒԵՄԲԵՐԻ 1870 Ամ
է ՆՈՐ—ՆԻԿՈԼԱՅ
ՏՇ ՖԵՏՈՎ։

---

## ԳԵՐ. ԱԲԵԼ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

## ՄԽԻԹԱՐԵԱՆՑ։

Հրամանաւ Վեհ. Կաթողիկոսի՝ Գեր. Աբել Արք Եպիսկոպոս Մխիթարեանց Մողնոյ Ս. Գէորգ Վանուց Վանահայր կարգեցաւ՝ միանգամայն հրահանգ ընդունելով ջանալ անդ Վանական դպրոց հաստատելոյ։

Ի սրտէ յաջողութիւն և կարողութիւն բարեմաղթելով նմին, կը յուսամք՝ զի իւր ուսումնասիրութեամբ և նպաստիւք մերազնեից՝ սուղ միջոցի մէջ կը կարողանայ հաստատել անդ Վանական դպրոց և ժողովել մերազնեայ մանկունքը ուսմամբք լուսաւորելոյ համար։

---

## Պ. ԳԵՈՐԳ ԳԱԶԱՐԵԱՆ։

Մողնոյ Գեր. Վանահայրը կը ծանուցանէ մեզ, զի Մեծարգոյ Պ. Գէորգ Գազարեան Երևանցի՝ Վանական դպրոցի համար կառուցանելիք սենեկաց և այլոց շինութեանց 'ի նպաստ հարիւր ռուբլի նուիրած է։

Կը գովեմք նոյն բարեպաշտ անձի առաքինական իղձը, և հրապարակաւ կը յայտնեմք զմեր շնորհակալութիւն։



---

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։